

Տիգրան Ս. Սիմյան
Բան. գիյ. թեկնածու

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼԻ ՀԱՐԻՏՈՒՄԸ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Առաջին աշխարհամարտի 100-ամյակի առիթով *

Բանալի բառեր – պացիֆիզմ, ինտելեկտուալ, Հեսսե, Ռոլան, Հաուփթման, Զոլա, Թումանյան, Սարտր, Բուրդյո:

Մուտք

Ներկա հրապարակմամբ կփորձենք վերլուծել 1910-ական թվականների ինտելեկտուալների՝ Առաջին համաշխարհային պատերազմի շուրջ ծավալած արժեքաբանական պայքարի բովանդակությունը: Այն խորությամբ ըմբռնելու համար ընտրել ենք **Հեսսե-Ռոլան-Հաուփթման-Բերգսոն** հրապարակախոսական խոսույթը: Բայց նախքան այդ փորձենք համառոտ ներկայացնել, թե ինչպիսի ինտելեկտուալ անհատի մոդել է ձևավորվում Եվրոպայում 19-20-րդ դդ. սահմանագծին:

1. Զոլայի և Սարտրի հաբիտուսը և կապիտալը

Մտավոր-ինտելեկտուալ գործունեությանը զբաղվող բարոյական մարդու դերը 19-րդ դարավերջի Ֆրանսիայում խիստ մեծանում է **Է. Զոլայի հաբիտուսի (պահվածքի)** շնորհիվ: Իսկ 1920-1930-ական թթ. Եվրոպայում և հատկապես Գերմանիայում ինտելեկտուալ անհատը զգում ու կանոնվի ստանձնում է հասարակությանը գալիք վտանգներից, անարդա-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 4.03.2014:

1 Հոդվածը շարադրված է Ֆրանսիացի հասարակաբան Պ.Բուրդյոյի տեսության հիման վրա: «**Հաբիտուս**» ասելով՝ Պ. Բուրդյոն նկատի ունի մտավորականի պահվածքը, իսկ «**կապիտալ**» ասելով՝ արժեքը, որը դառնում է մտավորականի քաղաքացիական դիրքորոշման շարժառիթը, շարժիչ ուժը:

Զ. (ԺԲ) Գաբրիել, թիվ 1 (45) հունվար-մարտ, 2014

ՎԷՄ համահայկական հանդես

րություններից, արհավիրքներից հեռու պահելու պատասխանատվությունը:

Ընդհանրապես՝ ինտելեկտուալ մարդն է կերտում մշակույթը, քաղաքակիրթ հասարակությունը, ազգը: Ավելին՝ ինտելեկտուալն է ձևավորում **հոմոլոբորը**, **նոոլոբորը**: Ինտելեկտուալ, բարոյական անհատի շարժառիթն է միայն ու միայն՝ **ճշմարտության բարձրաձայնումը, արդարության վերականգնումը**:

Հասարակության համատեքստում մտավորականի «**ինտելեկտուալ-տեր**» տիպը ի հայտ է գալիս Ֆրանսիայում 19-րդ դարավերջին: Իբրև օրինակ հիշենք Է. Ջոլայի հանրահայտ «Ես մեղադրում եմ» (“J’accuse”, 1898) նամակ-կոչը, որը գրվել է ի պաշտպանություն **Դրեյֆուսի** և ուղղվել է Ֆրանսիայի նախագահ **Ֆելիքս Ֆորին**: Ջոլան իր բարոյական պարտքն էր համարում պաշտպանել անարդար կերպով ու չհիմնավորված փաստերի հիման վրա ցմահ տաժանակիր աշխատանքի դատապարտված գինվորական Ալֆրեդ Դրեյֆուսին. «Պարտքս է, որ ես արտահայտվեմ: Լռությունը, – գրում էր Ջոլան, – համահավասար է մասնակից լինելուն: ... Քայլը, որը ես նախաձեռնեցի, տեղավորելով այս նամակը թերթում, ծայրահեղ միջոց է, որը պետք է արագացնի ճշմարտությունը և արդարադատությունը վերականգնելու գործընթացը: Ճշմարտություն՝ ահա այն ամենը, ինչ տենչում եմ, որ մարդկությունը այսքան տառապելուց հետո արժանանա երջանկության: Ուղերձիս վրդովված տողերը իմ հոգու ձիչն են»²:

Ջոլան այս տեքստով հանդես էր գալիս իբրև ճշմարտության ու արդարադատության պահանջատեր, «ինտելեկտուալ-տեր»: Քաղաքացիական այսպիսի պահվածքով նա անջատվում էր զանգվածներից³, դառնում ինչ-որ չափով հասարակության ծառա՝ անշահախնդիր կերպով բարձրաձայնելով անարդարացիորեն դատապարտված կապիտան Դրեյֆուսի գործի մասին⁴: Այս առիթով **Հայնրիխ Մանը**⁵ գրում է, որ Ջոլայի պահվածքը ոչ թե «գործողություն էր՝ խղճով թելադրված, այլ գործողություն՝ կոմպոզիցիոն առումով մտածված, արվեստագետի համար հետաքրքրա-

2 **Зоя Э. Я обвиняю** (Письмо г-ну Феликсу Фору) // “Опор”, 13.01.1898 / <http://lib.babr.ru/?book=4550> – 26.02.2014.

3 Պետք է նկատել, որ միայն 1960-ական թվականներին է Ֆրանսիայում ձևավորվում «զանգվածային մտավորականությունը»: Ըստ **Քրիստոֆ Շառլի**՝ 1900 թ. Ֆրանսիայում սովորում էր 30.000 ուսանող, 1935 թ.՝ 800.000, 1960 թ.՝ 194.000, 1975 թ.՝ 800.000, այսօր՝ 2 միլիոնից ավելի: Տե՛ս **Шарль Кристоф**. Интеллектуалы во Франции: вторая половина XIX века (гл. “Французские интеллектуалы от дела Дрейфуса до наших дней: память и история”), М., “Новое издательство”, 2005, с. 300.

4 Ընթերցողին հիշեցնենք, որ կապիտան Դրեյֆուսը դատապարտվել էր իբրև ռազմական տեղեկությունը գաղտնագրեծելու համար: Ի վերջո Դրեյֆուսը համաներման է արժանանում, և ինչպես Հ. Մանն է նկատում, «ոչ մի տարբերություն չի դրվում գեներալ Մերայի և Ջոլայի միջև» (**Манн Генрих**. Золя, с. 220 // **Манн Генрих**. В защиту культуры. Сборник статей. М., изд. “Радуга”, 1986): Համաներման միջոցով իշխանությունները կոծկեցին կամ մեղմացրին իրենց մեղքը, բայց հատկանշականն այն է, որ Դրեյֆուսը **չի արդարացվում**: 5 Է. Ջոլան արժևորվում է նաև Հայնրիխ Մանի՝ «Խոսք Ջոլայի մասին Պրահայում» (1916) երկրորդում. «Նա (Ջոլան – Տ.Ս.) ոչ միայն ստեղծում էր գրական երկեր, այլ նաև հաստատում էր ճշմարտություններ:... Նա կոչ էր անում ճշմարտության, հետևաբար՝ մարդասիրության»: Տե՛ս **Манн Генрих**, Речь Золя в Праге, “Сочинения в восьми томах”, том 8, М., Гос. изд-во худ. лит-ры, 1968, с. 102, 104.

շարժ, որը մի օր կստանա ամբողջական տեսք, ինչպես գեղարվեստական ստեղծագործությունը»⁶: Այդ «գեղարվեստական ստեղծագործության» «պտուղներն» են՝ «1900–ականներից լիբերալ բուրժուազիայի ինքնագիտակցության ձևավորումը, հակակղերականությունը, հանրապետական ոգին, ազգայնամոլության մերժումը, անհատականության քարոզը, ռացիոնալիզմը և հավատքը առաջընթացի նկատմամբ»⁷: Զուլայի պահվածքը ուղենշային է դառնում եվրոպական ինտելեկտուալի պահվածքի ձևավորման համար: Պատահական չեն լատինաամերիկյան բանաստեղծ **Ռուբեն Գարիոյի** (1867–1916 թթ.) խոսքերը Զուլայի մասին. «Այդ հզոր երկրի ապագան մեծ մասամբ պարտական է լինելու այս ավետարանչին (Զուլային – S.U.): Նրա խոսքերը դարձան ժողովրդի համար հաց»⁸:

Նկատենք՝ Զուլայի նման պահվածքը առաջինը չէր Ֆրանսիայում: Լուսավորության շրջանից կարելի է հիշատակել երկու նման դեպք: Առաջինը **մադամ Լեգրոյի**⁹՝ Փարիզի սովորական քաղաքացու պահվածքն էր, որը 1789 թ. հեղափոխության նախաշեմին պայքարում էր Բաստիլում պահվող մի անմեղ դատապարտյալի համար: Այս մասին գրել է **ժյուլ Միշլեն** (1798–1874 թթ.) իր «Ֆրանսիական հեղափոխության նախաշեմին» (1838 թ.) աշխատության մեջ:

Հիշենք նաև լուսավորիչ **Վոլտերին**, որը, փաստեր հավաքելով, կարողանում է հետմահու արդարացնել **Կալլասին**: Վերջինս մեղադրվում էր սեփական որդու սպանության մեջ, ինչի պատճառով էլ ընտանիքի անդամները չէին ուղեկցում հանգուցյալին: Վոլտերի շնորհիվ Կալլասը հետմահու արդարացվում է, և նրա ընտանիքը իր երախտագիտությունն է հայտնում մեծ լուսավորչին:

Ինչպես նկատում ենք, վերը նկարագրված թե՛ սովորական քաղաքացու (մադամ Լեգրո), թե՛ ինտելեկտուալների (Վոլտեր, Զուլա և այլն) պահվածքները հակադրվում են զանգվածային մարդու պահվածքին: Այս առումով ուշարժան է **Օրտեգա ի Գասետի** դիտարկումը. «Հակառակ պտտվող կարծիքների, – գրում է նա, – ծառայությունը ընտրյալների բաժինն է, ոչ թե զանգվածներինը (ընդգծումը մերն է – S. U.)»⁹:

2. Հեսսե–Ռոլան համագործակցությունը և պահվածքը¹⁰

Այս երկու գրողների համագործակցությունը լավագույնս ցույց է տալիս, թե ինչպես են մտավորականները գինվորագրվում մարդկության համերաշխ համակեցության գաղափարի իրականացմանը: Առաջին աշխարհամարտի հենց սկզբից Ռ. Ռոլանը աչքի է ընկնում իր «Գոտենմարտի

6 **Манн Генрих**. Золя, с. 209-210 // **Манн Генрих**. В защиту культуры. Сборник статей. М., изд. “Радуга”, 1986.

7 **Сартр Жан Поль**. Что такое литература? Слова. Мн., изд. “Попурри”, 1999, с. 173.

8 **Дарио Рубен**. Пример Золя // http://lukianpovorotov.narod.ru/dario_essai.html#Пример Золя – 26.02.2014.

9 **Ортега-и-Гассет Хосе**. Восстание масс, изд. “АСТ”, “Ермак”, 2003, с. 56.

10 Այս երկու գործիչների մասին տես **Седельник В.Д.** Ромэн Роллан и Герман Гессе, с. 225–246 // Ромэн Роллан: 1866–1966: По материалам юбилейной сессии (Ред. коллегия **И.И.Анисимов** и др.), Москва, изд. “Наука”, 1968.

ժամանակ» (**Au-dessus de la mêlée**, 1914–1915 թթ.) հողվածաշարով¹¹, որի միջոցով պայքարում էր պրուսական ռազմականացված քաղաքականության դեմ և կոչ անում Եվրոպայի ինտելեկտուալներին համախմբվել ու ստեղծել «Եվրոպական ոգու միություն» (**„union de l’esprit europaëen“**)¹², որը պետք է պայքարեր պատերազմող կողմերի այն մշակութային գործիչների դեմ, որոնք խրախուսում ու բորբոքում էին Առաջին աշխարհամարտը:

Ռոլանն իր «Գոտենարտի ժամանակ» հողվածաշարում տեղ գտած համանուն հողվածում գրում էր երիտասարդ Եվրոպայի «գիշատչային հերոսականության» մասին՝ սեփական և միաժամանակ հազարավոր այլ մարդկանց խիղճը թեթևացնելու համար¹³:

Այս գաղափարներին արձագանքում է առաջին «արթուն սրտերից» մեկը՝ Հերման Հեսսեն, ով Շվեյցարիայից բարձրացնում է իր ձայնը¹⁴: Հ. Հեսսեն 1914 թ. գրում է «Ընկերներ, պետք չեն այդ ձայները» (**„O Freunde, nicht diese Töne“**)¹⁵, 1914) հողվածը, որը բարձր է գնահատել Ռոլանը: Այս հողվածից հետո սկսվում է երկու հումանիստների նամակագրական կապը, իսկ արդեն 1916 թ. առաջին անգամ Ռոլանը և Հեսսեն հանդիպում են Գեեստի Կարմիր Խաչի կենտրոնական գրասենյակում¹⁶:

Ռոլանի և Հեսսեի համագործակցությունը ոչ միայն գրավոր ճանապարհով էր ծավալվում, այլ նաև ակտիվ գործունեությամբ (*vita activa*)¹⁷, թեպետ 28.02.1915 թ. Ռոլանին հասցեագրված նամակում Հեսսեն գրում է, որ նա «խաղաղ պոետ է և ակտիվությունը պակասում է»՝ նրա մեջ¹⁸: Մեկ այլ տեղ էլ նկատում, որ ինքը «ամբողջովին ապաքաղաքական է և ասիական պասիվության կողմնակից», բայց պատրաստական է «միշտ ջանասիրաբար ինչ-որ բան անել, եթե ազատությունը և մարդկությունը կա-

11 Այս թեման իր գեղարվեստական արտացոլումն է ստանում հեղինակի «Կլերամբո» (1916–1920) վեպում:

12 **Гессе Герман**, Ромену Роллану (Берн, 28 февраля 1915), с. 76. // Гессе Герман, Письма по кругу, М., изд. “Прогресс”, 1987. Այստեղ Հեսսեն արձագանքում է 26.02.1915 թ. Ռ. Ռոլանի՝ «բոլոր ազգերի ազատ մտածողների հոգևոր միության» գաղափարին (**Роллан Ромен**. Статьи, Письма (сост. и пер. Т.Л. Мотылевой), М., изд. “Радуга”, 1985, с. 266–267: Ֆրանսերեն բնագիրը՝ Hermann Hesse–Romain Rolland. Briefe. Zürich: Fretz & Wasmuth Verlag Ag. 1954, S. 9–10.

13 Տե՛ս **Роллан Ромен**. Над схваткой // **Роллан Ромен**. Собрание сочинений, Т. XVIII, Л., “ГИХЛ”, 1935 / http://www.belousenko.com/books/rolland/rolland_1914–15.htm – 26.02.2014.

14 Հարկ ենք համարում նկատել, որ Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբից ակտիվ պացիֆիստներից էին նաև Հ. Մանը, Յոհաննես Բեյխերը, Անտոն Կոլբը, Լեոնարդ Ֆրանկը, Ֆրիցց Ունրուն (Böttger Fritz. Hermann Hesse, S. 199).

15 Հայտնի է, որ այս խոսքերը Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայի երգչախմբին նախորդող խոսքի բառերն են: Այստեղ նկատենք, որ հողվածի խորագիրը միջտերստային կապ է ստեղծում Շիլլերի «Ձոն ուրախության» („An die Freude“, 1785) հետ, ինչը Բեթհովենի 1823 թ. գրած 9-րդ սիմֆոնիայի 4-րդ մասն է կազմում:

16 Materialien zu Hermann Hesses Demian (Hrsg. von Volker Michels), Erster Band, Suhrkamp Verlag, 1993, S. 47.

17 Այս երկու գրողների պայքարի մասին տե՛ս նաև **Седельник В.Д.** Ромен Роллан и Герман Гессе, с. 225–246 // Ромен Роллан: 1866–1966: По материалам юбилейной сессии (Ред. коллегия **И.И.Анисимов** и др.), изд. “Наука”, Москва, 1968.

18 Տե՛ս Hermann Hesse–Romain Rolland. Briefe, S. 11.

րիք ունեն»¹⁹:

Հանուն «ազատության և մարդկության կարիքների» Հերման Հեսսեն Առաջին աշխարհամարտի տարիներին Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր, կենդանաբան **Ռիխարդ Վոլտերեկի** (1877–1944 թթ.) հետ զինվորագրվում է՝ գերմանացի ռազմագերիների խնդիրները կարգավորելու, Ֆրանսիայում, Ամերիկայում գտնվող գերմանացի ռազմագերիներին գրքեր մատակարարելու գործին²⁰: Օրինակ՝ Հեսսեն փորձում է Ֆրանսիայի հարավում գերի ընկած մեքլենբուրգցիներին ուղարկել ֆրանսերեն բառարաններ, ուսանողներին՝ անատոմիայի կամ մեքենայագիտության դասագրքեր²¹: Փաստորեն, Հեսսեն իր պահվածքով (*habitus*) մտածում էր գերության մեջ հայտնվածներին հոգևոր վակուումից հանելու և նրանց լուրջ գրքեր մատակարարելու մասին²²:

Հեսսեի ակտիվ գործունեության բացահայտ փաստ կարող ենք համարել 1917 թ. **Հանս Շտուրցենեգերին** գրած նամակում տեղ գտած հետևյալ խոսքերը. «Ես հավատում եմ գաղափարի ուժին, որովհետև գաղափարը ինձ համար դատարկ, վերացական բան չէ, այլ մարդկության հուսադրում, ապագայի նկատմամբ վստահության հաղորդում»: Այս խոսքերը հաջորդում են Ռոլանի՝ Հեսսեին ուղղված հետևյալ խոսքերին. «Մեր հույսն ու հավատը ապագայի հենարանն են»²³:

Ռոլանի՝ 1914 թվականի «Նամակ ինձ մեղադրողներին» հողվածում կարելի է հանդիպել մի հատվածի, որտեղ երևում է նրա քաղաքացիական դիրքորոշումը. «Ես իմ պարտքն եմ համարում ընդվզել բարոյական և քաղաքական մոլորությունների դեմ: Պայքարում եմ պետությունների դեմ, այլ ոչ թե ժողովրդի»²⁴: Այս տրամաբանությունից էլ բխում է Ռ. Ռոլանի մյուս կարևոր միտքը. «Լինենք Հեղափոխության զինվորների նման, որոնց ոգին կենդանանում է մեր գորքերում, պայքարել ոչ թե ընդդեմ, այլ մեր թշնամիների համար: Եվ, ազատագրելով աշխարհը, կազատագրենք և իրենց: Ֆրանսիան չի պոկում շղթաները նրա համար, որ փոխարինի դրանք ուրիշով»²⁵: Ինչպես նկատելի է՝ Ռ. Ռոլանը իր պահվածքով և գործով պայքարում էր վերագգային խաղաղության համար, այլ ոչ թե ինչ-որ մի պետության հաղթանակի: Պայքարի թիրախում պրուսական ռազմաշունչ քաղաքականությունն էր, այլ ոչ թե Գերմանիայի տարածքում

19 Ebenda, S. 17.

20 Տե՛ս **Целлер Бернхард** Герман Гессе (сам свидетельствующий о себе и о своей жизни), Урал LTD, 1998, с.106.

21 Տե՛ս **Hesse Hermann**. Spendenaufruf “Grüß aus Bern”. Für unsere gefangenen Brüder, S. 97. In „Frankfurter Zeitung“ vom 2.8.1917 // Materialien zu Hermann Hesses *Demian* (Hrsg. von Volker Michels), Erster Band, Suhrkamp Verlag, 1993.

22 Հերման Հեսսեն իր՝ Շտեֆան Ցվայգին 20 նոյեմբերի 1915 թ. ուղղված նամակում գրում է. «Գերմանացիները, որոնք պատասխանատու էին ռազմագերիների համար, գրքեր ընտրելու հարցում նախապատվությունը տալիս էին տարբեր տեսակի գրական տրակտատիկներին, ուստի ստիպված եմ սեփական նախաձեռնությամբ ու սեփական միջոցներով լրացնել և ուղղել այդ բացը»: Տե՛ս **Гессе Герман**, Письма по кругу, М., изд. “Прогресс”, 1987, с. 77.

23 **Hesse Hermann**. Brief vom 3.1.1917 an Hans Sturzenegger, S. 86 // Materialien zu Hermann Hesses *Demian* (Hrsg. von Volker Michels), Erster Band, Suhrkamp Verlag, 1993.

24 **Роллан Роман**. Письмо к тем, кто меня обвиняет/http://www.belousenko.com/books/rolland/rolland_1914-15.htm – 26.02.2014.

25 Նույն տեղում:

ապրող ժողովուրդը:

Առաջին համաշխարհային պատերազմի «մսաղացի» համատեքստում Ռոլանի՝ հանուն խաղաղության, մարդու, մարդկայնության հնչեցրած անշահախնդիր կոչերը խոսում են նրա պատասխանատվության, մարդասիրության և անգամ դոնքիշոտության մասին, ինչի համար բարձր է գնահատվել իր ժամանակակիցների կողմից: Օրինակ՝ Հ. Հեսսեն՝ 1919 թ. «Նոյե ցյուրիխեր ցայտունգում» (անուղղակի կերպով) գրում էր, որ այս «ֆրանսիացին մի ժամ չէ իր կյանքից նվիրել պատերազմի արհավիրքներին»: Նա 1910–ական թթ. «հոգևոր ֆրանսիայի կերտողներից էր»²⁶:

Ուշագրավ է նաև տարիներ անց Հ. Հեսսեի՝ ֆրանսիացի գրողին արժևորող «Ռոմեն Ռոլանի մասին» (Über Romain Rolland, 1948) հոդվածը: Այստեղ կարևորվում է այն իրողությունը, որ Ռոլանը երիտասարդ սերունդների համար դառնում է «զարթուցիչ, ձայնաթող, խորհրդատու, ռազմընկեր, վիճելի ժամանակներում հենք», իսկ Գերմանիայի համար «ահավոր ժամանակներում, երբ նրա գրքերը արգելված էին, սրում էին հավատարիմ համայնքների աչքն ու խիղճը, արթուն պահում սրտերը»²⁷:

Բարձր է գնահատել Ռոլանին նաև **Մ. Գորկին** իր «Ռոմեն Ռոլանի մասին» (1926 թ.) հոդվածում. «Նա, հավանաբար, շատ խորն է զգացել ճշմարտությունը՝ թաքնված մի ռուսական ասացվածքում. «Ամեն ինչ կանցնի, բայց միայն ճշմարտությունը կմնա»»²⁸: Այս իմաստով Ռ. Ռոլանի պահվածքը մոտենում էր Է. Զոլայի պահվածքին: Ռ. Ռոլանը անգամ իր Նոբելյան մրցանակի ամբողջ դրամական հատույթը տրամադրել է «Կարմիր Խաչին»՝ Առաջին աշխարհամարտի տուժածներին օժանդակելու համար:

Ռ. Ռոլանի այսպիսի պահվածքը նույնպես վկայում է նրա՝ մարդկությանը, եվրոպական քաղաքակրթությանը անշահախնդիր ծառայելու մասին: Այսպիսով՝ Ռ. Ռոլանը «անաստված պատերազմից» ելք փնտրելու համար դուրս է գալիս ազգային սահմաններից և դիմում Եվրոպայի ինտելեկտուալներին, ինչի արդյունքում պատերազմող կողմերի մտավորականության մեջ ծավալվում է գաղափարական–արժեքաբանական մեծ պայքար:

3. Արժեքաբանական հակապայքարը Առաջին աշխարհամարտի համատեքստում (Բերգսոն, Հաուփթման, Ռոլան, Հեսսե)

Անրի Բերգսոնը արդեն Առաջին համաշխարհային պատերազմի առաջին օրերին դիմում է ֆրանսիական հանրությանը՝ ասելով, որ վիլհելմյան կայսրությունը դաժան պետականության մարմնավորում է և ու-

26 Hesse Hermann. Über einige Bücher, S. 143–144. In „Neue Züricher Zeitung“ vom 13.7.1919 // Materialien zu Hermann Hesses *Demian* (Hrsg. von Volker Michels), Erster Band, Suhrkamp Verlag, 1993.

27 Hesse Hermann, Gesammelte Schriften, Siebenter Band, S. 468.

28 Горький Максим. О Ромэне Роллане // Europe (жур.), Париж, 1926, N 35 (18 февраля) / <http://ruslit.traumlibrary.net/book/gorkiy-pss30-24/gorkiy-pss30-24.html#work037> - 26.02.2014.

գում է քաղաքակիրթ աշխարհը նվաճել²⁹: Նա պատերազմը հայտարարում է իբրև քաղաքակրթության պայքար տեխնիկայով հզոր բարբարոս ուժի իշխանության դեմ: Բերգսոնի կարծիքով՝ իրավունքը կհաղթի բռնությանը, «քաղաքակրթությունը» ցույց կտա իր ուժը բարբարոսության նկատմամբ³⁰: Բերգսոնյան այսպիսի նեղ «մենք»-ի գիտակցումը սուր քննադատության է ենթարկվում Ռ. Ռոլանի կողմից: Բերգսոնի երկրորդ ելույթից հետո **Գերհարթ Հաուփթմանը** իր «Ստի դեմ» (Gegen Unwahrheit, 1914) հոդվածով պատասխանում է Փարիզի «մակերեսային ֆելիետոնիստ», «սալոնային» փիլիսոփա Բերգսոնին, որը Արթուր Շոպենհաուերի ու Կանտի երկրում տեղ չունի³¹:

Հաուփթմանը այս հոդվածում վիլիելմյան կայսրությունը ներկայացնում է իբրև խաղաղ կայսրություն, որի ամբողջ նավատորմը, զորքը կոչված էր պաշտպանելու սեփական սահմանները: «Ակնհայտ է, որ մեր աշխարհագրական դիրքը, արևմուտքից և արևելքից սպառնացող ուժերը ստիպեցին մեզ ապահովել մեր տան անվտանգությունը: ...և կայսր Վիլհելմ II-ը՝ կայսրության բարձրագույն հրամանատարը, իսկապես խաղաղությունը սիրեց և խաղաղությունը պահպանեց շուրջ քառասուն տարի»³²: Գ. Հաուփթմանը կամ ձևացնում էր, կամ էլ չգիտեր վիլիելմյան կայսրության հավակնությունների մասին: Այս առումով Հաուփթմանի դիրքորոշումը համընկնում էր «ներսի» պաշտոնական կարծիքին ու տրամադրություններին³³:

«Պատերազմը, որը մենք վարում ենք, - գրում էր Հաուփթմանը, - պաշտպանողական պատերազմ է» և «վայր չենք դնի զենքը, մինչև Աստծո և մարդկանց առջև մեր սուրբ իրավացիությունը չապացուցենք»³⁴: Ինչպես նկատում ենք՝ այս խոսքերում էլ չկա «մարդկության» անունից խոսող որևէ ձայն: Եթե քաղաքական հարթության վրա Գ. Հաուփթմանը խիստ ռազմականացված տեսանկյունից է հանդես գալիս, ապա հասարակական և մշակութային դաշտին վերաբերող դատողություններում մենք/՚արանք

29 Տե՛ս **Klepsch Michael**. R.Rolland im Ersten Weltkrieg. Ein Intellektueller auf verlorenem Posten, Kohlhammer, Stuttgart, 2000, S. 48.

30 Մեջբերումը՝ ըստ **Klepsch Michael**. R.Rolland im Ersten Weltkrieg, S. 48

31 Տե՛ս **Hauptmann Gerhart**. Sämtliche Werke (Hrsg. Hans-Egon Hass), Berlin: Propyläen Verlag 1974, S. 843.

32 Նույն տեղում, էջ 844:

33 Նկատենք, որ վիլիելմյան կայսրության մասին ամբողջովին այլ կարծիքի էր Հայնրիխ Մանը, որի լավագույն հակատեքստը նրա «Հպատակը» (Der Untertan, 1918) վեպն է, իսկ նրա հրապարակախոսական տեքստերին տրված „Ein Zeitalter wird besichtigt“ («Ժամանակաշրջանը պետք է վերանայվի», 1946) խորագիրը ինքնին վկայում է վիլիելմյան տարիների վերաինաստավորման մասին: Կայգերական Գերմանիայի մասին նույն կարծիքին էր նաև **Կուրտ Տուխոլսկին**. «Ես կասեի, - գրում է Տուխոլսկին, - խոսում պատկեր: Իրականում վատ, շատ ավելի վատ» (**Tucholsky**, Kurt. Gesammelte Werke in 10 Bänden (Hrsg. von Mary Gerold Tucholsky und Fritz J. Raddatz, Band 5, Reinbek bei Hamburg, Rowohlt Verlag 1993, S. 286 (S. 436)): Այս մտայնությունը գլուխ է բարձրացնում Վայմարյան Հանրապետության վերջում, քանի որ ավտորիտար, ուղղահայաց կառավարման մտածելակերպը չէր հաղթահարվել, քաղաքական վերնախավը չէր (վերա)ինաստավորել Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքները: Գերմանիայում դա հնարավոր է դառնում արմատախիլ անել միայն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ սկսում է գործադրվել սպանացիֆիկացիայի (Entnazifizierung) ծրագիրը և Գերմանիայի դեմոկրատացման գործընթացը:

34 **Hauptmann Gerhart**. Sämtliche Werke, S. 844.

հակադրությունը նկատելի չէ: Հաուփթմանը գրում է, որ Շեքսպիրը ազգային արժեք է դարձել մեզ համար, նույնպես էլ «վայնարյան բարբարոսները, ինչպիսիք են՝ Գյոթեն, Շիլլերը, Հերդերը, Վիլհանդը անգլիացիների համար»³⁵:

Սակայն Հաուփթմանը հիմնական կոնֆլիկտը տեսնում էր միմիայն քաղաքական դաշտում. «...Գերմանիան և Ֆրանսիան քաղաքականապես չեն կարող լինել ընկերներ» (...Deutschland und Frankreich politisch nicht Freunde sein konnten)³⁶, և «Եվրոպայի միակ խաղաղության հաստատումը հնարավոր է գերմանական գենքի ամբողջական հաղթանակի շնորհիվ»³⁷: Ամենահետաքրքրականն այն է, որ «գերմանական գենքի հաղթանակը» Հաուփթմանը համարում էր «սուրբ նպատակ» (heilige Aufgabe), որը պիտի իրականանա «երկնքի» միջոցով³⁸: Այսինքն՝ Հաուփթմանի պարագայում պատերազմը նույնպես օրինականացվում էր քրիստոնեությանը, կրոնական բառապաշարով:

Սակայն Հաուփթմանը գործառում էր ոչ միայն կրոնական խոսույթին բնորոշ բառապաշարով («վերև»), այլ նաև ազգային, երկրային արժեքներով («ներքև»), այսինքն՝ պատիվ, մշակույթ, ուժ: Ըստ Հաուփթմանի՝ այս արժեքների շուրջ «արտասահմանում ահռելի քանակի ստահող հեքիաթներ են հյուսում»³⁹, ինչը նրա համար անընդունելի էր, քանի որ այս «երեք սահմանների հիման վրա է կանգնած մեր նահատակությունը» (An drei Grenzen steht unsere Blutzugenschaft)⁴⁰:

Հաուփթմանի «երկրային» կրոնի բաղադրիչները **աններդաշնակ** են՝ ունդամ մի հակադրություն են, որի միավորները միացած են իրար ոչ թե տրամաբանական, պատճառահետևանքային կապով, այլ կամայականորեն: Այս կամայականությունը տեսանելի է իր անհամադրելիության մեջ: Մշակույթը անհամադրելի է ուժին ու պատվին: Այս անտրամաբանական համակցումը մի յուրօրինակ **բրիկոլաժ** է, որը թաքնված կերպով միտված է ազդելու հասցեատիրոջ **հուզական** աշխարհի վրա: Ուղերձը գիտակցաբար ուղղված է և՛ դեպի «դուրս» (Անտանտ), և՛ դեպի «ներս»:

Դեպի «բարձր քաղաքակրթություն» (“höhere Gesittung”) ուղղված Հաուփթմանի դատողությունները թաքցնում են կայգերական Գերմանիայի աշխարհաքաղաքական նկրտումները, օրինակ՝ բալկանյան պետությունները վերջնականապես իր անմիջական ենթակայության տակ առնելու և Ռուսաստանի «ներկայությունը» թուլացնելու նպատակը: Այսինքն՝ **մենք տեսնում ենք, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին լեզուն մշակույթի ու կրոնական շղարշի տակ թաքցնում էր Գերմանիայի աշխարհաքաղաքական, տնտեսական նկրտումները:**

Ինչ վերաբերում է «ներսին», ապա սեփական ժողովրդի հաղորդակցման համատեքստում Հաուփթմանի փաստարկումը կատարում էր հասարակական գիտակցությունն անուղղակի կերպով **ծրագրավորելու**

35 Նույն տեղում, էջ 845:

36 Տե՛ս նույն տեղում, էջ 843:

37 Նույն տեղում, էջ 845:

38 Տե՛ս նույն տեղում, էջ 845:

39 **Hauptmann Gerhart**. Sämtliche Werke, S. 846.

40 Նույն տեղում, էջ 846:

գործառույթ: Պատերազմում հաղթանակի անհրաժեշտությունը գերմանական ժողովրդին ներկայացվում էր իբրև «սուրբ նպատակ», որը պետք է իրականացվի «երկնքի» օգնությամբ: Պատերազմի շարժառիթը ոտնահարված գերմանական պատիվն է, մշակույթը և ուժը: Հանուն այս արժեքների պատրաստ են նահատակվելու (Blutzeugenschaft) գերմանական հասարակության բոլոր շերտերը. «Սոցիալիստը կանգնած է բուրժուայի կողքին, գյուղացին՝ գիտնականի, արքայազնը՝ աշխատավորի, և բոլորը պայքարում են գերմանական ազատության, գերմանական ընտանեկան կյանքի, գերմանական արվեստի, գերմանական գիտության, գերմանական առաջընթացի համար: Նրանք բոլորը կռվում են հստակ գիտակցումով՝ հանուն ազնիվ ու հարուստ ազգային սեփականության, հանուն արտաքին ու ներքին բարիքի, որոնք ծառայության են դրվելու համընդհանուր առաջընթացին և մարդկության զարգացմանը»⁴¹:

Շարադրանքի հուզականությունը ուժեղանում էր նաև այն փաստով, որ Հաուփթմանի երկու որդիներն էլ զինվորներ էին, մասնակցում էին պատերազմական գործողություններին և նույնպես պատրաստ էին նահատակվելու:

Վերը բերված դատողություններում կարելի է տեսնել նաև ազգային մեծահասակության առասպելույթը, որի համաձայն **համընդհանուրը** կարգավորվելու և զարգանալու է գերմանականի (**եզակիի**) շնորհիվ: Մեջբերված հատվածից բխում է նաև, որ կայգերական Գերմանիան պատերազմի փուլում պայքարում էր «մենք»-ի հաստատման համար, որից հետո այդ «մենք»-ը պետք է հաստատվեր իբրև կեցության ձև «նրանք»-ի համար, և միայն նման մոդելի պարագայում հնարավոր կլինեին «մարդկության զարգացումն ու առաջընթացը»: Այս տրամաբանությունը չի կարող հանգեցնել խաղաղ համակեցության, որտեղ «մենք»-ն ու «նրանք»-ը կկարողանան ապրել համընդհանուր արժեքներով:

Կայգերական Գերմանիայի պաշտոնական քաղաքականությունը օրինականացնելու համար Հաուփթմանը սուր քննադատության է արժանացել դադաիստ **Վալտեր Մերինգի** կողմից: Վերջինս տարիներ անց իր «Մերկացումներում» (Enthüllungen, 1920) անդրադառնում էր եվրոպական ինտելեկտուալի հոգեկերտվածքին. «Կրթված եվրոպացու կապը այլ ժամանակների և երկրների հետ հիմնված է սադիստական կամ մագոխիստական քրիստոնեական ազդակների վրա»⁴²: Այս նկատառումը դիպուկ է, քանի որ քրիստոնեությունը, Աստծո անունից խոսելը վիլհելմյան կայսրությունում քաղաքական էլիտայի համար կրում էր դեկորատիվ բնույթ: Դա մի յուրօրինակ «դիմակ-պատյան» էր, որի միջոցով ժողովուրդը մանիպուլյացիաների էր ենթարկվում: Հաուփթմանին ուղղված նման անուղղակի քննադատությունից զատ հանդիպում ենք նաև ուղղակի քննադատության. «Սիլեզիայում Հաուփթմանը ստեղծագործում էր երկու գլուխներով» (...in Schlesien dichtete ein Hauptmann mit zwei Köpfen)⁴³: Այստեղ Վ.Մերինգի հեգնական վերաբերմունքը երևում է «ein Haupt-

41 **Hauptmann Gerhart**. Sämtliche Werke, S. 847.

42 Dada Almanach, S. 66.

43 **Huelßenbeck Richard**. Dada Almanach, Erich Reiss Verlag, 1920, S. 64.

mann» բնորոշման մեջ, ինչն արտահայտվում է անորոշ, սեռային ցուցիչ հոդի՝ «ein»-ի միջոցով: Հայտնի է, որ անձնանունների հետ անորոշ հոդերը չեն օգտագործվում: Ուստի լեզվի նորմայի միտումնավոր խախտումով Վ.Մերինգն արտահայտում է իր հեգնական վերաբերմունքը, այն է՝ Haupt (կարևոր) + man (n) (մարդ) :

Այժմ նորից վերադառնանք Ռոլան-Հաուփթման բանավեճին:

Ի պատասխան Հաուփթմանի «Մտի դեմ» հոդվածի՝ Ռ. Ռոլանը 1914 թ. օգոստոսի 29-ին բաց նամակ է գրում Գերհարթ Հաուփթմանին՝ մի քանի հարցադրումներ անելով՝

ա. ինչ հիմունքով է Հաուփթմանն իր կշտամբանքներով հարձակվում բարի բելգիացիների վրա,

բ. ու՞մ թոռներն են գերմանացիները՝ Գյոթեի, թե՛ Աթիլլայի,

գ. ու՞մ դեմ եք մարտնչում՝ բանակի, թե՛ մարդկային ոգու:

Այս հարցերն ի հայտ են գալիս այն բանից հետո, երբ Գերմանիան հարձակվում է Բելգիայի վրա, ռմբակոծում Մալին, Լուվեն քաղաքները, որի արդյունքում վառվում են **Ռուբենսի** նկարները: Նամակի վերջում Ռ. Ռոլանը ևս մի հարց է հարուցում. ինչ իրավունքով է պնդում Հաուփթմանը, որ գերմանացիները պայքարում են «ազատության և առաջընթացի»⁴⁴ համար: Ռոլանի նամակը մի յուրօրինակ կոչ էր Հաուփթմանին՝ իբրև ինտելեկտուալի, որ բարձրաձայնի պրոսական ռազմամոլության վայրագ քաղաքականության մասին, որի հետևանքով զոհվում են հազարավոր մարդիկ և ոչնչացվում հոգևոր արժեքներ:

Ռոլանի քննադատությանը համահունչ էր 1914 թ. աշնանը ռուս գրաքննադատ Վիկտոր Խովինի «Տուտուրիստները և պատերազմը» մանիֆեստային դասախոսության ժամանակ հնչած հետևյալ միտքը. «Մարինետտին կամ ավելի ձիշտ՝ Մարինետտիի հետևորդ պրոսացին՝ գերմանական սպայի ցցասաղավարտով (Pickelhaube), առաջնորդում էր վանդալների բազմությունը՝ առյուծներն այրելու համար: Նա՛ն էր գնդակոծում Ռեյնսի տաճարը, նա՛ն էր օդային ուժերի վարպետը, նա՛ն էր նետում նոնակներ Փարիզի Աստվածամոր տաճարի վրա»⁴⁵:

Այս խնդրին տարիներ անց անդրադարձել է բեռլինյան դադաիստ Վ.Մերինգը. «Եվրոպացի ինտելեկտուալը,- գրում է նա,- տրանսվիստի պես գոթական տաճարը արցունքներով հավասարեցնում է հողին, որ հետո վարձու զորանոցներում դրա ռենեսանսը տոնի»⁴⁶:

Այս տրամաբանության մեջ էր նաև **Հովի. Թումանյանի** խոսքը «Ապաշավանք» (1914) հոդվածում, երբ նա գրում էր Լուվենի գրադարանի ոչնչացման՝ «Ռայնսի տաճարի ավերման դրդողունի» մասին. «Մեր սրտերում, - գրում էր Թումանյանը, - Ռայնսի տաճարից շատ ավելի մեծ մի տաճար կար, որի մեջ նա՛ քաղաքակիրթ մարդը ապրում էր ձեզանից (թուրքերից- Տ.Ս.) առանձին, նրանք (գերմանացիները- Տ.Ս.) խորտակեցին էն հոյակապ տաճարը և մնացին դուրսը, իրենց ձեռքով արած ավերակ-

44 **Роллан Ромен.** Над схваткой, // **Роллан Ромен.** Собрание сочинений, Т. XVIII, Л., “ГИХЛ”, 1935 / http://www.belousenko.com/books/rolland/rolland_1914-15.htm - 20.10.2013.

45 Manifeste und Proklamationen der europäischen Avantgarde (1909-1938) (Hrsg. von Wolfgang Asholt und Walter Fähnders). Stuttgart:Weimar: J.B. Metzler Verlag 1995, S. 87.

46 Dada Almanach, S. 66.

ների մեջ, ձեզ հետ միասին, ձեզ հետ հավասար: Էլ չեն խաբիլ մեզ նրանց մեքենաներն ու ճարտար արվեստները: Ծիշտ է ասել ժողովուրդը, թե դրանք բոլորը «սատանի հնարքներ» են, չոր ուղեղի ծնունդներ, և նրա լուսավորության մեջ ո՛չ աստվածային շունչ է տիրում, ո՛չ մարդկային խղճմտանք է թագավորում»⁴⁷:

Այս ընդարձակ հատվածը վկայում է, որ Թումանյանը գերմանական քաղաքական վերնախավի պահվածքում տեսնում էր լուսավորության պրոյեկտի տապալումը⁴⁸ և պնդում էր, որ այլևս մշակույթը ոչ մի դեր չի խաղում քաղաքական կյանքում, քաղաքական գործիչների համար: Ինչ վերաբերում է տեխնոլոգիաների կիրառությանը⁴⁹, ապա Թումանյանը այն մեկնաբանում էր հակասցիենտիստական տեսանկյունից, որն արտահայտվում է ինչպես քրիստոնեական (չար/բարի), այնպես էլ բարոյաեզեքանական արժեքների հակադրմամբ (խիղճ/անխիղճ):

Այլ խոսքով՝ Թումանյանը Ռ.Ռոլանի պես արձանագրում էր և՛ մշակութային, և՛ գիտական գործիչների անկարևորությունը գերմանական քաղաքական էլիտայի համար, նրանց «լուկ որպես շքեղ զարդարանք» լինելու փաստը. «Ավաղ, կարծես, թե իզուր են ապրում ու անցնում մեծ փիլիսոփաները, մեծ գիտնականներն ու մեծ բանաստեղծները, ազգերի համար մեծ մասամբ նրանք հանդիսանում են լուկ որպես շքեղ զարդարանքներ (ընդգծումը մերն է- Տ.Ս.)⁵⁰»:

Այսպիսով՝ Լ.Թումանյանը հակապատերազմական խոսույթի գործիչների նման՝ «մեծ փիլիսոփաներին, մեծ գիտնականներին ու մեծ բանաստեղծներին» դիտարկում էր ազգային պատկանելությունից դուրս:

Կրկին վերադառնանք Ռոլան-Հաուփթման վեճին:

Ռոլանի՝ Հաուփթմանին ուղղված կոչի հիմնական նպատակն այն էր, որ գերմանական ինտելեկտուալները ընդդիմանան «պրուսական միլիտարիզմին, որը գինվորական և ավատատիրական կաստայի դրսևորում էր»⁵¹: Խնդիրն էլ ավելի բարդ էր, քանի որ Գերմանիայում բազում ինտելեկտուալներ ռազմականացվել էին, ինչի հետևանքով ինտելեկտուալ-

47 Թումանյան Հովհաննես, Ապաշավանք, «Հորիզոն», Թիֆլիս, 1914, 18 սեպտեմբերի, N 205: Տե՛ս նաև՝ Թումանյան Հովհաննես, Երկերի ժողովածու չորս հատորով, հատ. 4, Եր., «Հայաստան», 1969, էջ 219:

48 Հետաքրքրական է, որ Թումանյանի նամակներում հանդիպում ենք նաև լուսավորության մասին եղած հետևյալ ձևակերպմանը. «Հասկանալի առաջադիմությունը, ամենակողմանի կերպով առած, մի աստվածային աշխատանք է, որ կատարում են ընտիր անհատներն ու ազգերը, լավ մարդն ու լավ կյանքը ստեղծելու համար: Եվ անհատը կամ ազգը ինչքան ազնիվ է՝ էնքան էլ շատ է նախանձայնությամբ հառաջադիմության ճանապարհը շուտով բռնելու և էնքան էլ ուժեղ թափով ու սրտով է շարժվում էդ աստվածային գործը կատարելու»: Տե՛ս Թումանյան Հովհաննես, Դեպի մեծ կյանքը, «Հորիզոն», Թիֆլիս, 1917, 24 մայիսի, N 113: Տե՛ս նաև՝ Թումանյան Հովհաննես, Երկերի ժողովածու չորս հատորով, հատ. 4, էջ 229:

49 Լ.Թումանյանը իր «Ուղիղ ճանապարհը» հոդվածում («Հորիզոն», Թիֆլիս, 1917, մայիսի 28, N 111) Գերմանիայի հզորության մասին գրում է. «Գերմանական մի մեծ գործարանում ավելի շատ քիմիկոսներ կան, քան բովանդակ Ռուսաստանում: -Գիտություն, տեխնիկա, կոլտուրա - ահա թե ինչի մեջն է Գերմանիայի ահեղի ուժը, որով կռվում է գրեթե ամբողջ աշխարհի դեմ...»: Թումանյան Հովհաննես, Ուղիղ ճանապարհը, «Երկերի ժողովածու չորս հատորով», հատ. 4, էջ 289-290:

50 Թումանյան Հովհաննես, Երկերի ժողովածու չորս հատորով, հատ. 4, Եր., «Հայաստան», 1969, էջ 220:

51 Նույն տեղում:

ները սերտաճել էին պրուսական ռազմանոլ քաղաքականությանը: Այդ իսկ պատճառով Ռոլանը փորձում էր խոսեցնել «ուրիշ Գերմանիան, էլ ավելի արդար և ավելի մարդկային, որի փառասիրությունը կայանում է ոչ թե աշխարհում ուժով և խորամանկությամբ իշխելու, այլ ուրիշ ռասաներում ապրող բոլոր գաղափարները, նվաճումները խաղաղ յուրացնելու մեջ: Եվ դրան հակառակ՝ ներդաշնակություն ճառագայթելու»⁵²:

Գ.Հաուփթմանն անպատասխան չի թողնում Ռոլանի՝ 1914 թ. օգոստոսի 29-ի բաց նամակը և «Պատասխան պարոն Ռոմեն Ռոլանին» գրությամբ⁵³ փորձում է հակափաստարկներ ներկայացնել⁵⁴: Ռոլան-Հաուփթմանն փոխհասկացումը միայն մշակութային հարթության վրա էր: Հաուփթմանը համամիտ էր Ռոլանի հետ, որ պատերազմի արդյունքում մշակույթին, նրա նմուշներին մեծ վնասներ են հասցվում: Հաուփթմանի համար ընդունելի էր նաև համաեվրոպական **մշակութային** «մենք»-ը. «Ձեր գեղեցիկ գիրքը՝ «Ժան Քրիստոֆը», գերմանացիների համար միշտ կենսունակ է լինելու «Վիլիելմ Մայսթերի», «Կանաչ Հայնրիխի» հետ միասին»⁵⁵:

Մնացած բոլոր հարցերում Հաուփթմանն արտահայտում էր իր անհամաձայնությունը և առաջնորդվում գերմանական «մենք»-ի նեղ գիտակցմամբ: Դա է պատճառը նաև, որ Ռոլանի նամակը Հաուփթմանը համարում էր «դատարկ, սև հարթություն» (eine leere, schwarze Fläche)⁵⁶: Ռոլանին ուղղված Հաուփթմանի բոլոր հակափաստարկները սթափ էին. «պատերազմը պատերազմ է» և այս իրողությունից անբաժանելի են «տարրական իրադարձությունները» (Elementarereignis): Խոսքն այստեղ ավերածությունների, անգամ մշակութային իրերի (Ռուբենսի կտավների) մասին է: Հաուփթմանը խորապես ցավում էր, որ «պատերազմական թոհուրոհի մեջ հիմքում անփոխարինելի Ռուբենսն է»⁵⁷:

Հաուփթմանը սթափ բանականությամբ էր բացատրում գերմանական զորքերի տեղաշարժը դեպի չեզոք Բելգիա: Գերմանական զորքերի մուտքը Բելգիա «կենսական հարց էր» (eine Lebensfrage für Deutschland), այլ խոսքով՝ մարտավարական նշանակություն ուներ, որ «գերմանական զորքերը ազատ միջանցք ունենային»⁵⁸ տեղաշարժման համար: Իսկ հարձակումը Բելգիայի վրա նա հիմնավորում էր հետևյալ փաստարկով. բելգիացիները, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների գործիքը լինելով, «սկսեցին օրինակը չունեցող պարտիզանական պայքար»⁵⁹: Եթե Հաուփթմանի բացատրությունը լիովին տեղավորվում է «ռեալ քաղա-

52 **Роллан Робен.** Над схваткой (ст. PRO ARIS) // http://www.belousenko.com/books/rolland/rolland_1914-15.htm - 20.10.2012.

53 Առաջին անգամ այս պատասխանը տպվել է «Ֆոլկիշե բեռքախոսերում» (10.09.1914), իսկ գրվել՝ 08.09.1914.

54 Հաուփթմանի պատասխանը բարձր է գնահատել Ռիխարդ Վագների փեսան՝ Հյուստոն Ստյուարտ Չեմբերլենը (1855-1927 թթ.) ասելով. «Իմ ջերմ բարեմաղթանքները Ռ.Ռոլանի անիմաստ բարբաջանքին իսկապես վարպետորեն առարկելու համար» (**Hauptmann Gerhart.** Tagebücher 1914 bis 1918 (Hrsg. von Peter Sprengel), Berlin: Propyläen 1997, S. 288):

55 **Hauptmann Gerhart.** Sämtliche Werke (Hrsg. Hans-Egon Hass), Berlin: Propyläen Verlag 1974, S. 848.

56 Նույն տեղում, էջ 848:

57 **Hauptmann Gerhart.** Sämtliche Werke, S. 848:

58 Նույն տեղում, էջ 849:

59 Նույն տեղում, էջ 849:

քականության»⁶⁰ տրամաբանության համատեքստում, ապա հարձակումը մեկ ամիս անց այլ կերպ է մեկնաբանվում 93-ի մանիֆեստում՝ «Մշակութային աշխարհին»⁶¹ (An die Kulturwelt, 04.10.1914). «Մուտ է, որ մենք լկտիաբար խաթարել ենք Բելգիայի չեզոքությունը: Ապացուցված է, որ Ֆրանսիան և Անգլիան պայմանավորվել էին իրենց խախտման մասին: Ապացուցված է, որ Բելգիան համաձայն էր: ...չնայած բոլոր զգուշացումներին՝ ժողովուրդը թիկունքից անընդհատ կրակում էր, վնասներ հասցնում վիրավորներին, սպանում բուժօգնություն ցույց տվող կանավոր ծառայող բժիշկներին»⁶²: Հստակ երևում է, որ 93 հոգանոց ռազմականացված գերմանական մտավորականությունը դեկլարատիվ (ապացուցված է / Nachweislich) արտահայտություններով է փաստարկում, իսկ գործարանական տեսակետից գերմանացի զինվորները, կանավոր բժիշկները ներկայացվում են զոհի կարգավիճակում:

Հաուփթմանի՝ «ռեալ քաղաքականության» տեսանկյունից արվող փաստարկումներից կարելի է եզրակացնել, որ եթե անգամ մշակութային մակարդակում առկա էր համաեվրոպական «մենք»-ը, ապա քաղաքական մակարդակում այն բացակայում էր և բոլոր պատերազմական գործողությունները բացատրվում էին իրավիճակից, մարտավարությունից բխող դատողություններով:

Նկատենք, որ Հաուփթմանի հայացքներն առանց «դիմակի» հստակ երևում են 1914 թ. սեպտեմբերի 7-ին՝ իր օրագրում կատարած գրառման մեջ. «...Իմ սիրելի, սրտանց սիրելի Ռոլան: Դու ամբողջովին ձիշտ ու սխալ ես: Հիշիր մղձավանջի ու մոտալուտ մահվան մասին և մահացիր երիտասարդ ծերուկ»⁶³: Լռության մեջ գրի առնված Հաուփթմանի այս խոսքերը վկայում են նրանց խորը արժեքաբանական տարբերությունների մասին:

Ուստի Հեսսեն Ռոլանին ուղղված իր նամակում գրում է, որ Ռոլանի կոչը և Հաուփթմանի մերժումը իր համար «դառնում է անմոռանալի և շատ բաների նշան»⁶⁴:

Այժմ փորձենք հասկանալ, թե ի՞նչ արժեքաբանությամբ էր առաջնորդվում Հաուփթմանը իր հասարակական պահվածքում: Այս խնդիրը լավագույնս նկարագրված է գերմանացի գրականագետ **Պետեր Շպրենգելի** «Գրողը պատերազմի ժամանակ» հոդվածում: Շպրենգելը Հաուփթմանի պահվածքը փորձում է բացատրել «ներսից» և առանձնացնում է երեք

60 Եզրույթը օգտագործվում է բիսմարկյան իմաստով՝ իբրև «պրակտիկ քաղաքականություն» հասկացության հոմանիշ:

61 Այս մանիֆեստի կայացման ու քաղաքական համատեքստի մասին մանրամասն տե՛ս **Ungern-Sternberg**, Jurgen und Wolfgang, Der Aufruf 'An die Kulturwelt': das Manifest der 93 und die Anfänge der Kriegspropaganda im Ersten Weltkrieg, Stuttgart: Franz Steiner Verlag 1996 / http://books.google.am/books?id=ektcpdy4yw0C&pg=PA9&source=gbv_toc_r&cad=4#v=onepage&q&f=false – 19.01.2014.

62 Aufrufe und Reden deutscher Professoren in Ersten Weltkrieg (Hrsg. Klaus Böhme, mit einer Einleitung). Stuttgart: Reclam Verlag 1975, S. 47-49 / <http://www.nernst.de/kulturwelt.htm> – 24.01.2014.

63 Բնագրում հնչում է հետևյալ կերպ՝ «<...> Mein lieber, herzlich geliebter Roland. Du hast so vollkommen Recht und Unrecht. Erwinnere Dich an den Todesmut und die Todesnähe und stirb jugendlich, Greis» (**Hauptmann Gerhart**, Tagebücher 1914 bis 1918 (Hrsg. von Peter Sprengel), Berlin: Propyläen 1997, S. 39.).

64 Hermann Hesse-Romain Rolland. Briefe, Zürich, 1954, S. 100.

դրդապատճառ, որոնք հիմք են դառնում Հաուփթմանի նման շեղման համար.

ա. Հաուփթմանը պաշտոնական քաղաքական խոսույթին համադրողանջում էր՝ ելնելով զուտ անձնական, այլ ոչ թե կայզերական Գերմանիայի տնտեսական ու մարտավարական շահերից⁶⁵: Խնդիրն այն է, որ Հաուփթմանը «Տոնակատարություն» (Festspiel im deutschen Reimen, 1913) ստեղծագործության մեջ «վերևում» նկատում է «հակապատերազմական նրբերանգներ» (pazifistische Untertöne), ինչն էլ հիմք է դառնում գերմանական մոդեռնիստ պոետիկական ներկայացուցչի մարգինալացման համար:

բ. Հաուփթմանը իր ռազմականացված ելույթներով ուզում էր «հավելյալ ճանաչում» ձեռք բերել: «Վերևից» սպասում էր ուշադրության, սակայն, ինչպես դիպուկ նկատում է Շպրենգելը իր հիսունամյակի կապակցությամբ, կայզեր Վիլհելմ II-ից հեռագիր էր սպասում⁶⁶, ինչն այդպես էլ չի գալիս: Կարծում ենք՝ դրա համար կային պատճառներ: «Վերևը»՝ Վիլհելմ II-ը, ըմբոստ ոգի էր նկատել Հաուփթմանի «Ջուլիաները» (Der Weber, 1892) պիեսում: Այս ստեղծագործությունը դուր չի գալիս նրան: Նա բոյկոտում է և հրաժարվում գերմանական թատրոնի թագավորական օթյակից⁶⁷, կոչ անում, որ ոչ մի զինվորական չնայի այդ ներկայացումը: 1911 թ. Հաուփթմանի գրած «Առնետները» (Die Ratten) մի յուրօրինակ պյուզիկա (ակնարկ) էր՝ վիլհելմյան ոչ առողջ հասարակական միջավայրին:

գ. պատերազմի սարսափելիությունը ստիպում էր Հաուփթմանին հրաժարվել «քաղաքակիրթ բարոյականությունից»⁶⁸:

Շպրենգելի երեք դրդապատճառները լիովին ընդունելի են, բայց կարևորագույն շարժառիթ ենք համարում նաև պրուսական միլիտարիզմի դեմ խոսելու մասին Ռոլանի՝ Հաուփթմանին ուղղված բացահայտ պահանջը, «որը զինվորական և ավատատիրական կաստայի դրսևորում էր»⁶⁹: Հենց այս անհարմար վիճակից դուրս գալու համար Հաուփթմանը ստիպված է լինում համահունչ լինել կայզերական պաշտոնական քարոզչությանը: Անշուշտ, Հաուփթմանն իր հետագա ստեղծագործություններով («Թիլ Օյելենշպիգել» էպոսը (Till-Eulenspiegel-Epos 1928), «Բեռլինյան պատերազմական վեպը» (Berliner, Kriegsroman 1928/29)) «վերականգնվում» է: Նրա պահվածքի վերականգնման փաստ կարող ենք համարել նաև 1930 թվականին արդեն նացիստների քարոզչության արդյունքում աճող հակահրեական տրամադրությունները կանխող փաստաթղթի ստորագրությունը⁷⁰: Դա շարժում է **Յոզեֆ Գյոբելսի** գայրույթը, ինչի արդյունքում

65 Տե՛ս **Sprengel Peter**. Der Dichter im Krieg, S. 428 // **Hauptmann Gerhart**. Tagebücher 1914 bis 1918 (Hrsg. von Peter Sprengel), Berlin: Propyläen 1997.

66 Տե՛ս նույն տեղում, էջ 429:

67 Տե՛ս **Schlosser Horst Dieter**. Atlas Deutsche Literatur (9., durchgesehene und aktualisierte Auflage), München: Deutscher Taschenbuch Verlag 2002, S. 223.

68 **Sprengel Peter**. Der Dichter im Krieg, S. 431 // **Hauptmann Gerhart**. Tagebücher 1914 bis 1918 (Hrsg. von Peter Sprengel), Berlin: Propyläen 1997.

69 **Роллан Ромен**. Над схваткой. // **Роллан Ромен**. Собрание сочинений, Т. XVIII, Л., “ГИХЛ”, 1935 / http://www.belousenko.com/books/rolland/rolland_1914-15.htm - 20.10.2013.

70 Տե՛ս Zentral-Verein-Zeitung. Blätter für Deutschland und Judentum. Organ des Zentral-Vereins deutscher Staatsbürger jüdischen Glaubens // (Berlin, 1930, N 37, 12. September) / <http://lunacharsky.newgod.su/lib/neizdannye-materialy/razgovor-s-gergartom-gauptmanom> - 29.01.2014.

անանուն քննադատական հոդված է գրվում նացիստների կենտրոնական օրգանում՝ «Անգրիֆում»՝ «Բնագղի բացակայություն» (Instinktlosigkeit) խորագրով (Der Angriff/ Berlin, 1930, N 76)⁷¹:

Հատկապես ուշագրավ է Հաուփթմանի վերջին պիեսը՝ «Արևի մայր մտնելուց առաջ» (Vor Sonnenuntergang, 1932), որտեղ կոնֆլիկտների ֆոնին շոշափվում է ընտանիքի ներսում եղած (հայր//զավակներ) սոցիալ-քաղաքական մեծ փոփոխությունների վտանգը: Երրորդ Ռայխի տարիներին Հաուփթմանը հայտնվում է «ներքին վտարանդիության» (“Innere Emigration”) տարածքում, մարզինալացվում է, լռեցվում է նրա ստեղծագործական «ձայնը», բայց գրողը նացիստական Գերմանիայի մասին խոսում է հունական միֆերի միջոցով⁷²: Երրորդ ռայխի տապալումից հետո Հաուփթմանի կարևորությունը արժևորվում է, ապամարզինալացվում: Պատերազմից հետո 1946 թ., նա դառնում է **Յո. Բեխերի** կողմից ղեկավարվող «Կուլտուրբունդի» պատվավոր նախագահը:

Այժմ տեսնենք, թե ինչպես է «ավարտել» այս խոսույթը Հերման Հեսսեն 1914 թ. հոկտեմբերի 3-ին «Նոյե ցյուրիխեր ցայտունգ»-ի ֆելիետոնի բաժնում գրված իր «Ընկերներ, պեսք չեն այդ ձայները» („O Freunde, nicht diese Töne“, 1914) հոդվածում: Նա այստեղ քննադատել է Առաջին աշխարհամարտի մեջ ներքաշված, թշնամացած պետություններում մտավոր գործունեությանը գբաղվողներին՝ «ուսումնասիրողներին, ուսուցիչներին, արվեստագետներին, գրական գործիչներին, որոնք աշխատում են խաղաղության և մարդկության համար»⁷³: Ճշմարտությունը բարձրաձայնելու համար Հեսսեից երես են թերում նրա «ընկերները»⁷⁴: Իսկ Ֆրանսիայում մտավորականները բոյկոտում են, չեն ուզում լսել գերմանական երաժշտություն (Ռ. Վագներ):

Նույն կերպ Գերմանիայում բոյկոտում են «թշնամի ժողովուրդների գրական հոգևոր երկերը: Շուտով գերմանական թերթերում, - գրում է Հեսսեն, - չենք կարող թարգմանել, գնահատել ու քննադատել անգլիական, ռուսական, ճապոնական երկերը»: Այսպիսի տրամաբանությունը Հեսսեն համարում էր «մտածողության անբուժելի խաթարման խայտառակ նշան» (O Freunde, S. 45), «մտածողության պակաս, հոգևոր հարմարավետություն» (O Freunde, S. 46)՝ կոնֆորմիզմ:

Այս «մտածողության անբուժելիության ախտանիշերը» ի հայտ են գալիս նաև կրթական համակարգում: Օրինակ՝ Ֆրանսիայում չէր դասավանդվում գերմաներեն, և հակառակը: 1914 թ. Բեռլինում Անգլիական փողոցը (Englische Straße) վերանվանվում է Գերմանական փողոցի (Deutsche Straße), Վիեննայում «Վեստմինստեր» (Westminster) արձարանը՝ «Վեստմյունստեր»-ի (Westminster), „Eau de Cologne“-ն՝ „Eau de Pologne“-ի⁷⁵: Այս

71 Տե՛ս Луначарский А.В. Разговор с Гергартом Гауптманом // <http://lunacharsky.newgod.su/lib/neizdannye-materialy/razgovor-s-gergartom-gauptmanom> - 29.01.2014.

72 Այս մասին մանրամասն տե՛ս Шарьпина Татьяна Александровна, Замысел Гете и трагедия Гауптмана “Ифигения в Дельфах” // Гетевские чтения, М., 1997.

73 Hesse Hermann. Gesammelte Schriften (Briefe, Rundbriefe, Tagebuchblätter), Siebenter Band, Fr. am Main: Suhrkamp Verlag 1987, S. 45.

74 Седельник В.Д. Ромен Роллан и Герман Гессе, с. 228 // Ромен Роллан: 1866–1966: По материалам юбилейной сессии.

75 Տե՛ս Klepsch Michael. R.Rolland im Ersten Weltkrieg. Ein Intellektueller auf verlorenem Posten,

ծայրահեղությունը հասնում է անգամ գիտության ոլորտին: Օրինակ՝ Լիոնում տեղի ունեցող կոնֆերանսին ժամանած գերմանացի պրոֆեսոր, էլեկտրաֆիզիկոս Գեորգ Ֆրիդրիխ Նիկոլան պիտակվում է իբրև «գերմանական ագենտ»⁷⁶:

Անգամ **Շտեֆան Ցվայգն** է «Բեռլիներ Տագերլատուն» հրապարակում հանրային ճնշման ազդեցությամբ գրված իր բացատրությունը՝ «Օտար երկրների ընկերներին» (An die Freunde im Fremdland), որտեղ հրաժեշտ է տալիս թշնամի երկրներում գտնվող գրողներին՝ նշելով, որ պատերազմի համատեքստում «սեփական սերը և ատելությունը չի պատկանում իրեն»⁷⁷: «Փլատզերմաներենով խոսող գյուղացին, – գրում է Ցվայգը, – որը հազիվ թե հասկանում է գերմաներեն, անկասկած նաև իմ սրտի խոսքը, ավելի մոտ է ինձ կանգնած, քան դուք»⁷⁸՝ օտարերկրյա մշակութային գործիչները: Նկատենք, որ որոշ ժամանակ անց Ցվայգը վերանայում է իր պահվածքը և վերականգնում է իր կապերը այդ գործիչների հետ⁷⁹:

Հեսսեն իր հոդվածում բերում էր Գյոթեի օրինակը, որը «սերը առ մարդկություն» վեր էր դասում «սեր առ գերմանականություն»-ից (die Freude am Deutschtum // die Freude am Menschentum): Հոդվածում Գյոթեն բնութագրվում է իբրև «ինտելեկտուալ խղճի, ներքին ազատության, գաղափարների միջազգային աշխարհի քաղաքացի և հայրենասեր», որի տեսանկյունից «առանձին ազգերի ճակատագրերը իրենց առանձին կարևորությամբ գտնվում էին համաշխարհային ամբողջի ենթակայության տակ» (O Freunde, S. 46): Գյոթեի համար համընդհանուր «մենք»-ը վեր էր նեղ ազգային «մենք»-ից:

Այս խնդրի մասին կարդում ենք նաև Հեսսեի մի կոչում. «Գրողը պետք է սիրի մարդկությունը (որն իր գրածների լավագույն մասը չի կարդում, բայց կարիքն ունի), այլ ոչ թե ընթերցող հանրությունը»⁸⁰: Ասվածից հստակ բխում է, որ «մարդկությունը» ավելի կարևոր է, քան ազգային «մենք»-ը: Մարդը, մարդկությունը վերագգային կատեգորիա է:

Այս խնդրին անդրադառնում է Ռ.Ռոլանը իր «Ֆրեդերիկ վան Էդենին» ուղղված նամակում (12 հունվարի 1915 թ.). «Պետք է փոխել եվրոպական հասարակական կարծիքը: Դա անհետաձգելի խնդիր է: Միլիոնավոր մարդկանց մեջ, որոնք կարող են լինել միայն գերմանացի, ավստրիացի, ֆրանսիացի, ռուս, անգլիացի և այլն և այլն, փորձենք լինել **մարդ**»⁸¹: Ըստ

Stuttgart: Kohlhammer Verlag 2000, S. 36.

76 Ebenda, S. 35. Այս մասին մանրամասն տես **Hellmut v. Gerlach**. Die große Zeit der Lüge. Der Ersteweltkrieg und die deutsche Mentalität (1871–1921). In: Bremen (Nachdruck), 1994, S. 33–77.
77 **Zweig Stefan**. An die Freunde im Fremdland. In.: Berliner Tegeblatt von 19.09.1914. Մեջբերումը ըստ՝ **Klepsch Michael**. R.Rolland im Ersten Weltkrieg, S. 43.

78 Տես **Zweig Stefan**. An die Freunde im Fremdland. In.: Berliner Tegeblatt von 19.09.1914. Միխայել Կլեփշը գրում է, որ այս տեքստը հետագա ոչ մի ժողովածուի մեջ չի ներառվել (**Klepsch Michael**. R.Rolland im Ersten Weltkrieg, S. 43):

79 Այս մասին տես **Цвейг Стефан**. Ромен Роллан. Отрывок из книги “Мир вчерашнего” (пер. Ергения Захарина) // Слово/Word, 2010, N 68 / <http://magazines.russ.ru/slovo/2010/68/cv31.html> – 2.01.2013.

80 **Hesse Hermann**. Spendenaufruf “Grüß aus Bern”. Für unsere gefangenen Brüder, S. 97. In „Frankfurter Zeitung“ vom 2.8.1917 // Materialien zu Hermann Hesses *Demian*.

81 **Роллан Ромен**. Письмо Фредерику ван Эден / http://www.belousenko.com/books/rolland/rolland_1914-15.htm – 20.10.2013.

էութեան, Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի ժամանակ նեղ ազգային «մենք»-ը, դժբախտաբար, հաղթող է դուրս եկել Գերմանիայում:

Ռ.Ռոլանը «Կուռքերը» (1914) հողվածում գրում է, որ «իսկական մտավորականը, իսկական մտավորականության ներկայացուցիչը նա է, ով իրեն և իր իդեալը դարձնում է տիեզերքի կենտրոն»⁸²: Այս խոսքերն ուղղված էին կայզերական Գերմանիայի մտավորականներին, որոնք բորբոքում ու օրինականացնում էին պատերազմը: Նույն հողվածում նա ավելացնում է. «Գերմանիան չի ունեցել ավելի աղետաբեր թշնամի, քան իր մտավորականությունը»⁸³: Հակված ենք կարծելու, որ Ռ. Ռոլանը չափազանցել է գերմանական մտավորականության խաղաղացած բացասական դերը: Մտավորականությունը սոսկ «դողանջում» էր, հենք էր դառնում կայզերական Գերմանիայի միլիտարիստական քաղաքականության համար, մտավորականությունը քարոզչության **միջոց էր** և ռազմատենչ քաղաքականության անզոր ջատագովը: Բայց քաղաքական ընտրախավը կարող էր նաև առանց նրա օժանդակության իրականացնել իր զավթողական քաղաքականությունը:

Ռ. Ռոլանն իր «Կուռքերը» հողվածում նկատում է, որ պատերազմի մասնակիցները և մարտնչող ժողովուրդները ժամանակի ընթացքում կոռուպցիոն «այս անիմատ պատերազմը», բայց «մտքի մարդկանց սրտերում դեռ երկար մխալու է պատերազմի վիրավորանքը», «գրողները կրկնակի մոլուցքով պիտի փնտրեն փաստարկներ»⁸⁴: Ռոլանի կանխատեսումները լիովին իրականանում են: Դրա վկայությունն է պատերազմական խոսույթի ակտիվացումը, նեղ ազգային «մենք»-ի սրացումը հատկապես Վայմարյան Հանրապետության տարիներին, երբ սղաճի արդյունքում գերմանացիները բավականին աղքատանում են, իսկ շփումը այլ մշակույթների և երկրների հետ պակասում է: Վայմարյան Հանրապետության քաղաքացիների մեծ մասը չէին կարողանում շրջագայել, անգամ ուղևորվել հարևան պետություններ (օր.՝ Ֆրանսիա): Այս օբյեկտիվ պատճառը նպաստում էր զանգվածների մշակութային ինքնամեկուսացմանը, ինչն էլ պարարտ հող էր ստեղծում նացիստական տրամադրությունների խորացման համար: Լայն զանգվածները գրկվում էին այլ մշակույթների հետ շփվելուց, ուստի չէր կայանում մշակութային երկխոսությունը, չէին ձևավորվում «մշակութային կոալիցիաներ»⁸⁵:

Մշակութային կոալիցիան ինքնին ենթադրում է տարբեր մշակույթների հավասարաժեքություն, որտեղ բացակայում են «բարձր» // «ցածր», լավ//վատ, զարգացած // հետամնաց հակադրությունները: Դժբախտաբար, նացիստների իշխանության գալով, էթնոկենտրոնությունը՝ «մենք»-ը, գալիս է առաջին պլան և նման «մենք»-ը սկսում է մյուս մշակույթներին՝ «նրանք»-ին, նայել «վերև»-ից (հիշենք նացիզմի տարիներին սիրված հայտնի երգը՝ Deutschland, Deutschland über alles // Գերմանիա, Գերմանիա,

82 Роллан Робен. Кумиры / http://www.belousenko.com/books/rolland/rolland_1914-15.htm - 20.10.2013.

83 Там же.

84 Там же.

85 Այս եզրույթը Կոդ Լևի-Ստրոսին է: Տե՛ս **Լևի-Տրոս Կլոդ**, История и раса, с. 349 // **Լևի-Տրոս Կլոդ**, Путь масок, М., изд. „Республика“, 2000 (399).

ամեն ինչից վեր): Սա է պատճառը, որ «մարդկային մշակույթի վերագրա-
յին կառույց» կերտելու (O Freunde, S. 46) գաղափարը նորից «ակտիվա-
նում» է 1932 թ. Հեսսեի «Ճանապարհորդություն դեպի Արևելք» երկում՝
որպես հակամոդել հասունացող նացիզմին:

Ռումեն Ռոլանը գերմանացիների «զանգվածային խելագարությու-
նը»⁸⁶ (որը Երրորդ Ռայխի ժամանակ հասնում է իր բարձրակետին) նկա-
տել էր դեռևս Առաջին աշխարհամարտի տարիներին. «Գերմանական
ոգու և մնացյալ Եվրոպայի միջև, – գրում է Ռ. Ռոլանը,– չկան հատման
եզրեր: Գերմանացիներին ասում են «մարդկություն», պատասխանում են
«Obermensch» (գերմարդ), «Obervolk»⁸⁷ (գերժողովուրդ):

«Համագրային խելագարությունը» ամբողջությամբ հակասում էր Լու-
սավորության պրոյեկտին՝ ազատությանը, խաղաղությանն ու համերաշ-
խությանը, որի մասին Հեսսեն փորձում էր անուղղակի կերպով հիշեցնել
իր «հակառակորդներին»: «Պատերազմ կլինի այնքան ժամանակ, – գրում
է Հեսսեն,– մինչև մարդկանց մեծամասնությունը չապրի ոգու գյոթեական
թագավորությունում» (O Freunde, S. 49): Այսինքն՝ մշակույթի միջոցով է
հնարավոր հաղթահարել միջագրային թշնամանքը, հակահումանիստա-
կան արժեքաբանությունը. «Մարդկային մշակույթը կայանում է կենդա-
նական բնագոյները հոգևորի՝ ամոթի, երևակայության և գիտելիքի բա-
րեկերպելու միջոցով» (O Freunde, S. 49): Այստեղ ուշագրավ է, որ երեք
երևույթներն էլ մարդու ձևավորման ու կայացման կարևորագույն հիմ-
քերից են: «Ամոթը» („Scham“) գծում է կարելիի // չի կարելիի սահմանը,
որի հիման վրա էլ ձևավորվում է մշակույթը: Այն մարդու գործողություն-
ների զսպանակն է, մարդու **բարոյականը** կարգավորողը, իսկ «երևա-
կայությունը» („Phantasie“) և «գիտելիքը» („Kenntnisse“) հիմք են դառնում
տեքստեր, արժեքներ ստեղծելու, նողորտը ձևավորելու համար:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Առաջին համաշխարհային
պատերազմի հենց սկզբից Զոլայի պահվածքին համահունչ մտավո-
րականներ են հանդես գալիս և՛ Ֆրանսիայում, և՛ Գերմանիայում, որոնք
իրենց ակտիվ քաղաքացիական դիրքորոշումներով դառնում են «ինտե-
լեկտուալ-տեր» սնդեղի մտավորականներ: Ռ.Ռոլանը, Հ.Հեսսեն, իրենց
ազգային «մենք»-ի գիտակցումից վեր կանգնելով, կոչ են անում մտա-
վորականությանը զերծ մնալ պատերազմը լեգիտիմացնող կոչերից, ձեր-
բազատվել թշնամական քարոզչությունից:

Տիգրան Ս. Սիմյան – Հետաքրքրությունների ոլորտները՝ նո-
րագույն գերմանական գրականության պատմություն, գրականու-
թյան նշանագիտություն, հաղորդակցության տեսություն, հումա-
նիտար գիտությունների մեթոդների պատմություն:

86 **Роллан Ромен.** Над схваткой (ст. INTER ARMA CARITAS) // **Роллан Ромен.** Собрание сочинений, Т. XVIII, Л., “ГИХЛ”, 1935 / http://www.belousenko.com/books/rolland/rolland_1914-15.htm – 20.10.2013.

87 Ռ. Ռոլանի հոդվածում այս երկու գերմաներեն բառերը բառացի թարգմանություններ են: Դրանց փոխարեն պետք է լինեին «Übermensch», «Übervolk»:

Summary

HABITUS OF INTELLECTUAL IN THE CONTEXT OF WAR

On the occasion of the 100th anniversary of WW I

Tigran S. Simyan

The article traces the model of the “host-intellectual” in its “passive” and “active” forms, as a guarantee for the “recovery” and democratization of a society, as a generator of meaning for updating the values of capital (Bourdieu) in society. Special attention is paid to habitus prominent pacifist Romain Rolland, Hermann Hesse, and an axiological “war” (conflict) is traced between anti-pacifists (Bergson, Hauptmann) and pacifists (Rolland, Hesse) in the context of the First World War.

Резюме

ГАБИТУС ИНТЕЛЛЕКТУАЛА В КОНТЕКСТЕ ВОЙНЫ

К 100-летию Первой мировой войны

Тигран С.Симян

В статье прослеживается модель “хозяин-интеллектуал” в “пассивном” и “активном” варианте, как гарант “оздоровления” и демократизации общества, как генератор смысла для обновления ценностей, капитала (П.Бурдьё) в обществе. Особое место уделяется габитусу видных пацифистов Романа Роллана, Германа Гессе, а также прослеживается аксеологическая “война” между антипацифистами (Бергсон, Гауптманн) и пацифистами (Роллан, Гессе) в контексте Первой мировой войны.

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԿՈՆՏԵՔՏԻՆ, 2014
ԳԼՈՒԿ 1 (45) ԽՈՒՄԲԱՐ-ՎԻՐՈՒՄ

ՎԷՎ ԽԱՆԿԱԿԱՎԱԿԱԿԱՆ ԽԱՍՈՒԿ